ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2018թ. N---Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևան 2800» մշակութային հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2018 թվականի դեկտեմբերի 5-ի նիստի N11 արձանագրությունը և ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Որպես նվիրատվություն ընդունել «Երևան 2800» մշակութային հիմնադրամի հաշվեկշռում ընդգրկված 85032000 (ութսունհինգ միլիոն երեսուներկու հազար) ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով նոր տոնածառը համապատասխան լույսերով և խաղալիքներով՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան 2800» մշակութային հիմնադրամը Ռուսաստանի Դաշնությունից ձեռք է բերել և Երևան տեղափոխել նոր արհեստական տոնածառ 35մ բարձրությամբ իր համապատասխան լույսերով և զարդարանքով 85032000 (ութսունհինգ միլիոն երեսուներկու հազար) ՀՀ դրամ արժեքով:

Այն ձեռք է բերվել Երևանի 2800-ամյակի մշակութային միջոցառումների շրջանակում հոբելյանական տարվա տարեմուտը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար:

«Երևան 2800» մշակութային հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահը Երևանի քաղաքապետին հասցեագրած 2018 թվականի դեկտեմբերի 5-ի N15 գրությամբ ներկայացրել է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2018 թվականի դեկտեմբերի 5-ի նիստի N11 արձանագրությունը և խնդրել է նշված գույքը Երևան համայնքին նվիրելու համաձայնություն տալ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 597-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նվիրառուն իրավունք ունի մինչև նվերն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից: Այդ դեպում նվիրատվության (նվիրաբերության) պայմանագիրը համարվում է լուծված:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտություն է առաջացել Երան քաղաքի ավագանու որոշմամբ ընդունել Երևան համայնքին որպես նվիրատվություն հանձնվող գույքը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գույքը որպես նվիրատվություն ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գույքը որպես նվիրատվություն ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
_____
2018թ.
N_____-Ա որոշման

ՑԱՆԿ

«Երևան 2800» մշակութային հիմնադրամի կողմից Երևան համայնքին որպես նվիրատվություն հանձնվող գույքի

Հ/Հ	Անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդամենը /ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ/
1	Ուրալյան եղևնու հենակմախք, բարձրությունը 35 մ (գույնը՝ կանաչ)	հատ	1	27022920	27022920
2	Լույսերի հավաքածու կրիստալ-3 (35մ)	հատ	1	45038210	45038210
3	Քամիների վարդ գազաթ, բարձրություն 2 մ (գույնը՝ կանաչ)	հատ	1	468380	468380
4	Փայլուն գնդաձև խաղալիք, 200 մմ տրամագծով (գույնը՝ կարմիր)	հատ	200	4954.15	990830
5	Փայլուն գնդաձև խաղալիք, 200 մմ տրամագծով (գույնը՝ արծաթագույն)	հատ	200	4954.15	990830
6	Փայլուն գնդաձև խաղալիք, 200 մմ տրամագծով (գույնը՝ բաց մանուշակագույն)	հատ	200	4954.15	990830
7	Փայլուն գնդաձև խաղալիք, 250 մմ տրամագծով (գույնը՝ կապույտ)	հատ	400	6755.675	2702270
8	Փայլուն գնդաձև խաղալիք, 250 մմ տրամագծով (գույնը՝ արծաթագույն)	հատ	150	6755.675	1013350
9	Փայլուն գնդաձև խաղալիք, 300 մմ տրամագծով (գույնը՝ կարմիր)	հատ	250	15033.72	3758430
10	Փայլուն գնդաձև խաղալիք, 300 մմ տրամագծով (գույնը՝ ոսկեգույն)	հատ	150	13706.33	2055950
ԸՆԴԱՄԵՆԸ					85032000